

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Բրուցելյոզի դեմ պայքարի համատեղ աշխատանքներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Վիրջինիա-Մերիլենդ տարածաշրջանային անասնաբուժական համալսարանի տնօրեն Վալերի Ռագանին՝ Հայաստանում կենդանիների բրուցելյոզ հիվանդության դեմ արդյունավետ պայքարի և դրա կանխարգելման համատեղ աշխատանքների ընթացքին վերաբերող հարցերի քննարկման նպատակով:

«ԱՄՆ գյուղատնտեսության մշտապես աջակցում է Հայաստանի Հանրապետությանը՝ կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի խնդրում, և կարծում եմ, որ համատեղ ուժերով և միասնական ջանքերով, մենք կարող ենք այս հարցում ևս շոշափելի արդյունքներ գրանցել», – նշել է Սերգո Կարապետյանը:

Այս ենթատեքստում գրուցակիցներն ընդգծել են երկրում գործող լաբորատորիաների՝ ժամանակակից սարքավորումներով վերագինման և միջազգային ստանդարտներին համապատասխանեցման կարևորությունը, ինչպես նաև ամերիկյան փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Իր հերթին Վալերի Ռագանը գոհունակությամբ նշել է, որ արդեն ավարտին են մոտենում կենդանիների բրուցելյոզ հիվանդության վերահսկման համալիր ծրագրի նախագծի մշակման աշխատանքները: Ծրագիրը միտված է՝ նպաստել բրուցելյոզի վաղ ախտորոշման ու կանխարգելման աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը, որի շրջանակներում պետք է իրականացվեն նաև կենդանիների հաշվառում ու համարակալում: Այս կապակցությամբ, նախարարն ընդգծել է, որ հատկապես կարևոր է այն թիրախային համայնքների ընտրությունը, որտեղ ծրագիրն առավել զգալի հաջողություններ կարող է ունենալ: Շեշտվել է ծրագրով իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ հայ ֆերմերների իրազեկվածության մակարդակի բարձրացման կարևորությունը, ինչը կնպաստի նրանց առավել ակտիվ ներգրավվածությանն ու մասնակցությանը բրուցելյոզի ախտորոշման և կանխարգելման շրջանակում իրականացվող միջոցառումներին: Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են պատրաստակամությունը՝ ընդլայնել համատեղ գործողությունների շրջանակը՝ կենդանիների բրուցելյոզի և այլ հիվանդությունների դեմ պայքարն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Քննարկվել է ENPARD ծրագրի իրականացման ընթացքը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP) և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) ներկայացուցիչներ Բաբկեն Բաբայանին և Սևերին Օմանին:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի» (ENPARD) «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» բաղադրիչի կատարման ընթացքը: Հանդիպման սկզբին նախարար Սերգո Կարապետյանն ընդգծեց ծրագրի կարևորությունը՝ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի տարբեր ճյուղերի զարգացման համար: «Այս ծրագրով ոչ միայն բարենպաստ պայմաններ կստեղծվեն մեր երկրում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ու զարգացման համար, այլև այն խթան կհանդիսանա ոլորտի ընդհանուր զարգացման համար», – նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը:

Հյուրերի տեղեկացմամբ՝ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրով» (ENPARD) իրականացվող «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» բաղադրիչի շրջանակում, որն իրականացվելու է Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում, ստացվել է թվով 190 հայտարկում: Հայտատուները հիմնականում ցանկություն են հայտնել՝ ծրագրի շրջանակում տրամադրվող միջոցներով, զբաղվել մասնավորապես՝ հնդկացորենի, հատապտղի, ոչ ավանդական բանջարեղենի, կաթի և կաթնամթերքի, ինչպես նաև մեղրի առաջնային արտադրությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարությունը հավանություն է տվել մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանությանը: Մեթոդաբանության նպատակն է՝ բացահայտել այն տարածքային միավորները, որոնց ռեսուրսային հնարավորություններն ավելի բարձր են, քան՝ տնտեսական զարգացման մակարդակը, երկրում իրականացվող ծրագրերը դարձնել հասցեական, ապահովել տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերության մեղմացումը՝ առավել արդյունավետ օգտագործելով տնտեսական զարգացման ներուժը:

Սահմանվել են՝ սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման, ինչպես նաև ժամանակացույցը, կերերի և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի համակարգերի ներդրման ժամանակացույցերը, միևնույն ժամանակ, ուժը կորցրած են ճանաչվել կառավարության 2014 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1228-Ն և 1230-Ն, 2007 թ. մայիսի 3-ի թիվ 531-Ն որոշումները: Արդյունքում՝ կապահովվի «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Կերի մասին» ՀՀ օրենքների համապատասխան պահանջների կատարումը:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին հացահատիկային և հատիկազանգեղեն մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են շուրջ 199,8 հազար հեկտար՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 11 հազար հեկտարով:

Հուլիսի 24-ի դրությամբ՝ հանրապետությունում, օպերատիվ տվյալներով, ընդհանուր առմամբ, հնձվել են շուրջ 40 հազար հեկտար հացահատիկի ցանքատարածություններ՝ ապահովելով շուրջ 133 հազար տոննա համախառն բերք:

Արարատի և Արմավիրի մարզերում հացահատիկի բերքահավաքի աշխատանքները գրեթե ավարտվել են, միջին բերքատվությունը ոռոգելի տարածքներում կազմել է 43-47 ց/հա, առանձին դեպքերում՝ 50-60 ց/հա և ավելի:

Հանրապետության մյուս մարզերում հացահատիկի բերքահավաքի աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ընթացիկ տարում Հայաստանից, ընդհանուր առմամբ, արդեն արտահանվել է 47854 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 27 623 տոննայի դիմաց: Այդ թվում՝ հուլիսի 27-ի դրությամբ, արտահանվել է 20 000 տոննա ծիրան՝ նախորդ ամբողջ տարվա 1791 տոննայի դիմաց և 2038 տոննա կեռաս՝ նախորդ ամբողջ տարվա 370 տոննայի դիմաց: Հայաստանից արտահանվել է 2848 տոննա վարունգ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 53 տոննայի դիմաց, 1160 տոննա կալաչեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 728 տոննայի դիմաց: Արտահանվել է նաև 9054 տոննա կաղամբ և ծաղկակաղամբ՝ 2014 թվականի նույն ժամանակահատվածի 1492 տոննայի դիմաց:

Է 2

Չորանոց՝ արեւային Էներգիայով	Էջ 3
Բերքահավաքը սկսվել է	Էջ 5
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Քննարկվել է ENPARD ծրագրի իրականացման ընթացքը

Ծրագրի համակարգող անձնակազմի անդամները շեշտել են, որ հայտադիմումների ընտրությունը կատարելիս, նախապատվությունը տրվելու է նրանց, ովքեր ցանկություն են հայտնել մշակել բարձրարժեք և ոչ ավանդական մշակաբույսեր: Ծրագրի արդյունավետության ապահովման համար հետագայում նախատեսվում է կազմել առանձին բիզնես-պլաններ, որոնց հիման վրա կիրականացվի յուրաքանչյուր հայտատուի ֆինանսավորումը:



Այս առումով, նախարարը ընդգծել է ծրագրի շրջանակում դիվերսիֆիկացված գյուղմթերքի, պանրի եվրոպական տեսակների արտադրության, հատապտղի նոր այգիների հիմնման խթանումը, նաև հակակարկտային ցանցերի ներդրման կարևորությունը:

Նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է հետագա ծրագրերում ևս, հնարավորության դեպքում, ներառել մեղվաբուծության զարգացմանը, ձկնաբուծարաններում ջրի խնայողատար ռեժիմով կորագույն համակարգերի ներդրմանը, ոռոգման կաթիլային համակարգերի կիրառմանը վերաբերող բաղադրիչներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Նոր գյուղատնտեսական սպասարկման կենտրոն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքում մասնակցել է գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի բացման պաշտոնական արարողությանը:

Կենտրոնը հիմնադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ՝ Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ (USAID) ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում:



Միջոցառմանը ներկա էին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ղեկավար Զարեն Յիլիարդը, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն» հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի ղեկավար Անուշ Ասլանյանը, այլ պաշտոնատար անձինք և հյուրեր: «Այս տարվա ընթացքում, մեր հանրապետությունում արդեն երկ-

հետագայում ընդլայնել աշխարհագրությունը՝ ընդգրկելով բոլոր մարզերը»,- նշել է Սերգո Կարապետյանը:

Մասնագիտացված կենտրոնը տեղի գյուղատնտեսներին տրամադրելու է ծառայությունների ամբողջական փաթեթներ, կապեր է ստեղծելու գյուղատնտեսների և միջազգային կազմակերպությունների միջև, որոնք տրամադրում են պարագաներ, սարքավորումներ, ինչպես նաև կտրամադրի տեղեկատվություն՝ այգեգործության կառավարման զարգացման նոր տեխնոլոգիաների մասին: Կենտրոնը հազեցած է լինելու հողի, ջրի և բույսերի հետազոտության ժամանակակից լաբորատոր սարքավորումներով, ինչպես նաև նպաստելու է շուկայական կապերի հաստատմանը և հասանելի է դարձնելու ֆինանսական ռեսուրսները՝ Հայաստանի ֆերմերների ու գյուղական ՓՄՁ-ների համար: Բացի այդ, կենտրոնում տեղի և օտարերկրյա մասնագետների կողմից կազմակերպվելու են սեմինարներ և դասընթացներ՝ Արարատի մարզի շուրջ 25 համայնքների մոտ 2 500 գյուղատնտեսների համար: Կենտրոնը ծառայելու է նաև որպես գործնական սեմինարների անցկացման վայր՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար:



րորդ այգեգործական ուղղվածություն ունեցող գյուղատնտեսական սպասարկման կենտրոնն ենք բացում: Նոր կենտրոնը ոչ միայն հազեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով, այլև գյուղացիական տնտեսություններին կա-

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է, որ վերամշակող ընկերությունները սկսում են լուրջ մթերումների գործընթացը: Մասնավորապես, օգոստոսի 1-ից լուրջ մթերումներ են սկսվել «ՄԱՊ» ՓԲԸ-ում և «Եվրոթերմ» ՓԲԸ-ի Արմավիրի մարզի Վանանդի մթերման կետում: Օգոստոսի 3-ից լուրջ մթերումներն իրականացվել են նաև «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն և «Արարատ սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն՝ Էջմիածնի պահածոների գործարանի տարածքում:

Վերջերս, Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողովի նիստ՝ մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի նախագահությամբ: Օրակարգում քննարկվել է մարզի՝ Ծովազարդ, Դրմաշեն, Ծաղկունք, Լճափ, Լանջաղբյուր համայնքներում 220 վոլտ Հայաստան-Իրան էլեկտրական գծի հենասյուների համար հատկացվող տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխման հարցը: Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է համապատասխան կյուրթերը, դրական եզրակացությամբ, ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Հանրապետությունում շարունակվում են գյուղատնտեսական մթերքների բերքահավաքի աշխատանքները: Հուլիսի 28-ի դրությամբ, օպերատիվ տվյալներով՝ արտադրվել է շուրջ 263 հազար տոննա բանջարեղենի համախառն բերք, որից՝ շուրջ 68 հազար տոննա լուրջ:

Հանրապետությունում արտադրվել են նաև ավելի քան 70 հազար տոննա բոստանային մշակաբույսեր (սեխ, ձմերուկ) և շուրջ 76 հազար տոննա կարտոֆիլ:

Օպերատիվ տվյալներով, /28.07.2015/ արտադրվել է նաև շուրջ 161 հազար տոննա պտղի և հատապտղի համախառն բերք, այդ թվում՝ շուրջ 103 հազար տոննա ծիրանի համախառն բերք:

Օգոստոս ամսվա կլիմայական բնութագիրը

Հանրապետության տարածքում օգոստոսը երկրորդ շոգ ամիսն է, սակայն մի շարք շրջաններում՝ Գեղարքունիքի հյուսիսային մասում, Արագածոտնի նախալեռներում, բարձր լեռնային շրջաններում օգոստոսին ջերմաստիճանը փոքր-ինչ բարձր է հուլիսյան ջերմաստիճանից:

Միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում 15-16,7 °C է, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի մարզերում և Սյունիքի հովիտներում՝ 25...26 °C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը այստեղ հասնում է 41-43,7°C (43,7 °C-2011 թ. Մեղրի): Միջինը 25-26 օր ցերեկային ջերմաստիճանը լինում է 30 °C-ից բարձր, նվազագույն ջերմաստիճանը չի իջնում 8-11°C ցածր, մինչև ամառվա վերջը պահպանվում է շոգ և չոր եղանակը: Փոքր ինչ ցածր ջերմաստիճան է գրանցվում Տավուշում, Արագածոտնի նախալեռնային շրջաններում (միջինը՝ 18-21°C, առավելագույնը՝ 37-39 °C): Հարմարավետ պայմաններ են դիտվում Լոռիում, Լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում (միջին ջերմաստիճանը՝ 15...18 °C), իսկ օգոստոսի երկրորդ տասնօրյակում միջին օրական ջերմաստիճանը իջնում է մինչև 15 °C, որը նշանակում է ամռան ավարտ և աշնան սկիզբ, այստեղ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 1941 թ. իջել է մինչև -2...-3 °C:

Օդի հարաբերական խոնավությունը հանրապետության տարածքում միջինը կազմում է 70-75 %, այն բավական ցածր է Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում՝ 42-43 %: Ինչպես և հուլիսին, կարող են դիտվել խորշակներ, որոնց հաճախականությունը ավելանում է՝ պայմանավորված խոնավության պակասորդի մեծացմամբ և քամու արագության ուժեղացմամբ:

Հանրապետության տարածքում օգոստոսին տեղումների քանակը միջինը կազմում է 34 մմ, այսինքն, տարեկան տեղումների 5 %-ը: Տեղումները բաշխվում են շատ անհավասարաչափ: Առավելագույն քանակը դիտվում է Լոռիում, Տավուշում՝ 40-60 մմ, նվազագույնը՝ Արարատի, Արմավիրի մարզերում՝ 6-11 մմ:

Որոշ տարիների, Արարատյան դաշտում և Երևանում տեղումներ չեն դիտվել, բայց եղել են տարիներ, երբ այստեղ դրանց քանակը մի քանի անգամ գերազանցել է նորման: Տեղումներով օրերի թիվը ևս բավականին անհամաչափ է բաշխված, հանրապետության տարածքում՝ 7-11 օր, Արարատի, Արմավիրի մարզերում, Վայոց ձորում՝ 1-4 օր:

Ամպրոպային գործունեությունը հանրապետության հյուսիսային կեսում հաճախակի է միջինը 7-10 օր, առավելագույնը՝ 15-21 օր, մնացած շրջաններում որոշակիորեն պակասում է միջինը 3-4 օր:

ՏՆՏԵՍՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՉՈՐԱՆՈՑ՝ ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅՈՎ

Տարեցտարի էլեկտրաէներգիայի և բնական գազի թանկացումները բացասական ազդեցություն են ունենում չորերի արտադրությանը գազով ու էներգիայով: Այդ թանկացումներն ուղակիորեն ազդում են չորերի արտադրության ինքնարժեքի բարձրացման վրա, քանի որ այդ արտադրությունը պահանջում է մեծ չափերի էներգասպա-

ռազմաբաժանում և 8 կՎտ առավելագույն հզորությամբ արևային ջրատաքացուցիչներով: 34 նախագահ հաջիկ Սահակյանի տեղեկացմամբ, I փուլում չորանոցը կարող է չորացնել միջինը 150 կգ միրգ (ծավալը և չորացման ժամկետը պայմանավորված են մրգատեսակով): «Եթե օգտագործում ենք միայն արևային էներգիա, չորացման գործընթացը տևում է 24-36, իսկ



ռում (միջին էներգասպառումը կազմում է չորերի արտադրական ծախսերի շուրջ 20 %-ը):

Արևային ջրատաքացուցիչներով չորանոցի ներդրման, դրանց էներգաարդյունավետության բարելավման, մասնավորապես՝ ծախսվող բնական գազի և էլեկտրաէներգիայի քանակների կրճատման նպատակով, ՄԱԶԾ «Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի» «Փոքր դրամաշնորհների» ծրագրի ֆինանսական աջակցությամբ, Գյումրիի «Ֆերտի» բարեգործական կենտրոնը 34-ն իրականացրել է «Տեղական պայմաններում իրագործելի, ցածր ածխածնային տեխնոլոգիաների խթանում՝ բնական ջերմափոխանցումային արևային չորանոցի մոդելի ներդրման միջոցով» ծրագիրը: Չորանոցն ապահովված է

զուգահեռաբար, էլեկտրաէներգիայի կամ գազի օգտագործման դեպքում՝ 12-24 ժամ: Սարքի առավելություններից մեկն էլ այն է, որ այն կարելի է օգտագործել նաև տաք ջրի ստացման և մասնակի ջերմության նպատակով՝ տնտեսելով էներգակիրը», -ասում է հաջիկ Սահակյանը: Արդյունքում, չորի ինքնարժեքն իջնում է 300-400 դրամով: Սարքի գյուտարարները նախատեսել են վերջինիս զանգվածային արտադրությունը կազմակերպել հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունում: Տնտեսական մեծ օգուտ խոստացող արևային չորանոցով հետաքրքրված է նաև հարևան Կրաստանը: Նախագիծը, որի վրա աշխատել են շուրջ 2 տարի, կենտրոնի գյուղատնտեսական առաջին և հաջողված ծրագրերից մեկն է:

Նելլի Սահակյան

ՀԱՍՏՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Վերջերս անցկացվեց «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) տարածում և քաղաքացիների սպասարկման գրասենյակների ստեղծում ՀՀ համայնքներում» թեմայով աշխատաժողով: Այն կազմակերպվել էր Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ իրականացվող՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարու-

թելու համար և ընդգծել դրանց իրականացումը հետագա բարեփոխումների համատեքստում:

«Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Զաթրին Շեֆերն արդյունավետ է համարել ծրագրի շրջանակում կատարված աշխատանքները՝ վստահություն հայտնելով, որ այս նախաձեռնությունը նույնպես հաջողությամբ կիրականացվի:

Ծրագրի աջակցությամբ, նախատեսվում է առաջնահերթ ներդրել համայնքային կառա-



յան հետ համատեղ:

Միջոցառմանը մասնակցում էին՝ ՀՀ ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Զաթրին Շեֆերը, ՏԻՄ և ՏԿ ներկայացուցիչներ:

ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը կարևորել է էլեկտրոնային կառավարման ներդրումը՝ հատկապես խոշորացման ծրագրում ընդգրկված համայնքներում, ինչն էականորեն կնպաստի համայնքային ծառայությունների որակի բարձրացմանը, մատչելիությանը և հասանելիությանը: Վ. Տերտերյանը շնորհակալություն է հայտնել գործընկեր կազմակերպություններին՝ ինչպես այս, այնպես էլ՝ ընթացիկ ծրագրերին ու բարեփոխումներին հետևողական աջակցություն ցուցաբե-

վարման տեղեկատվական համակարգեր և քաղաքացիների սպասարկման գրասենյակներ՝ համայնքների խոշորացման երեք փուլերում ընդգրկված 22 համայնքում: ՀԿՏՀ-ն միասնական տեղեկատվական համակարգ է՝ նախատեսված ապահովելու համայնքապետարանի էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը, համայնքի բյուջեի և գույքի կառավարումը, ֆինանսական և բյուջետային հաշվետվությունների ստացումը, տեղեկանքների, թույլտվությունների տրամադրումն ու մի շարք այլ գործառնություններ: Համակարգը, իր փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով, հնարավորություն ունի էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակել պետական կառավարման մարմիններում գործող Mulberry համակարգի հետ: Ներկայումս դրանք ներդրված են հանրապետության 550 համայնքում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌ



Յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, Մաշտոցի պուրակին հարող Կասյան փողոցի վերին հատվածում շարունակում են գործել գյուղատնտեսական փոնավաճառները:



ՎԵՐԱՍՏԵԱԿՈՒՄ ԿԵՆՑԱԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ներկայումս ՀՀ-ի գրեթե բոլոր բնակավայրերում կենցաղային պահածոյացումը դարձել է բնակչության ամենափարթեղ շերտերի անհրաժեշտ գործերից մեկը: Տնային պայմաններում պարզապարզ պահածոները, կազմելով ազգաբնակչության սննդապահովման կարևորագույն օղակ, հաշվվում են միլիոնավոր փողերով, իսկ դրանց փրկականին այնքան է ընդլայնվել, որ նույնիսկ, հնարավոր չէ հաշվարկել: Եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ի ազգաբնակչության յուրաքանչյուր մարդուն ընկնում է կենցաղային պայմաններում պարզապարզ առնվազն 30 պայմանական փողի պահածո, ապա կարելի է արձանագրել, որ հանրապետության ազգաբնակչության կողմից փարեկան արտադրվում է ոչ պակաս 90 մլն պայմանական փողի պահածո: Պահածոների այդպիսի քանակը համապատասխանում է հանրապետության ամենամեծ՝ Արմավիրի պահածոների գործարանի փարեկան արտադրական հզորությանը, ինչը ինքնին կարևորում է խնդիրը:

Անհրաժեշտ է նշել, որ կենցաղային պայմաններում բուսական և կենդանական ծագման հումքատեսակների պահպանման ու պահածոյացման վերաբերյալ ազգաբնակչության վերաբերյալ գիտելիքները թերի են, տեխնոլոգիական հրահանգներ չկան, առկա հրահանգները կազմված չեն մասնագետների կողմից և հաճախ ապակողմնորոշում են օգտվողներին: Այդ ամենը ոչ միայն դժվարացնում են ազգաբնակչության խնդիրները, այլ նաև կարող են առաջ բերել սնունդի անվտանգությունը, ինչը պահանջում է հումքի պահածոյացման հիմնական սկզբունքների իմացություն: Առօրյայում պահածոյագործը պետք է որոշակի պատկերացում ունենա նաև վստահար մանրէների մասին, տիրապետի դրանցից ազատվելու տեխնոլոգիական հնարքներին:

Պահածոյացման գործընթացն իր մեջ ներառում է հետևյալ հարցերը՝

- բանջարեղենների, մրգերի, հատապտուղների առանձնահատկությունները
- մսեղենի, ձկան առանձնահատկությունները
- հումքի պահպանման սկզբունքները
- մինչ պահածոյումը հումքի նախնական մշակման եղանակները
- պահածոյացման տարաներ
- բանջարեղենների բնական պահածոների պատրաստման տեխնոլոգիա
- բանջարեղենների խորտիկային պահածոների պատրաստման տեխնոլոգիա
- տոմատաթերթերի պատրաստման տեխնոլոգիա
- բանջարեղենային մարինադների պատրաստման տեխնոլոգիա
- սնկի պահածոների պատրաստման տեխնոլոգիա
- աղ դրած, թթվեցրած բանջարեղենների պատրաստման տեխնոլոգիա
- մրգա-հատապտուղային կոմպոտների և հյութերի պատրաստման տեխնոլոգիա
- մուրաբաների, ջեմերի, պովիդլոների պատրաստման տեխնոլոգիա
- ցուկատների պատրաստման տեխնոլոգիա
- բանջարեղենների, մրգերի, հատապտուղների և սնկի չորացման տեխնոլոգիա
- կենցաղային պայմաններում պատրաստված պահածոների պահպանման պայմաններն ու որակը
- կենցաղում թարմ բանջարեղենի պահպանումը
- սննդի յուրացում տարիքային տարբեր խմբերի մարդկանց մոտ
- սննդի յուրացման կախվածությունը դրանց վերամշակման վիճակից
- սննդային թունավորումներ
- սննդում անօգտագործելի սննդամթերքի տարբերակում

Բուսական միայն որոշ հումքատեսակներ (հացահատիկներ, ընդեղեններ, ընկույզներ) կարող են տևականորեն պահպանվել սովորական պահեստային պայմաններում՝ առանց առանձնակի տեխնոլոգիական միջամտության: Մնացած թե՛ բուսական, և թե՛ կենդանական ծագման հումքատեսակները չեն կարող տևականորեն պահպանվել թարմ վիճակում:

Մթերքները փչանում են դրանցում և միջավայրում առկա ֆերմենտների ու մանրէների գործունեության պատճառով, ինչպես նաև՝ բնական կենսագործունեության հետևանքով:

Ֆերմենտները հատուկ նյութեր են, որոնք պարունակվելով բուսական ու կենդանական օրգանիզմներում՝ շատ քիչ քանակությամբ, արագացնում են դրանցում ընթացող քիմիական ռեակցիաները՝ կարևորագույն դեր կատարելով տարբեր կենսական պրոցեսներում: Ֆերմենտները բուսա-

կան և կենդանական ծագման հումքատեսակների կենսագործունեության ընթացքում մասնակցում են կենսաքանակային գործընթացներին, նպաստում դրանց աճին, պտղի առաջացմանը, սնմանը, հասունացմանը: Բուսական հումքի բերքահավաքից և կենդանիների սպանդից հետո դրանցում ֆերմենտային գործընթացները շարունակվում են՝ բերելով հումքի բնափոխման: Հումքի բնափոխումն առաջանում է նաև մանրէների գործունեության պատճառով: Մանրէների տեսակները հաշվվում են տասնյակ հազարներով, որոնք տարբերվում են մեծությամբ, ձևով, շարժունակությամբ, կառուցվածքով, միջավայրի նկատմամբ իրենց դրսևորմամբ, այս կամ այն սննդատեսակով սնվելու ունակությամբ և այլն: Մանրէների մեծ մասն ամենից լավ զարգանում են 20-40°C-ում, սակայն կան այնպիսիները, որոնք ընտելանում են առավել բարձր ջերմաստիճաններին: Մանրէների շատ տեսակներ բնականոն կենսագործունեության համար թթվածնի կարիք ունեն, կան նաև այնպիսիները, որոնք գոյատևում են առանց օդի առկայության: Սննդամթերքների պահպանման և պահածոյման առաջնահերթ խնդիրներն են՝ հումքատեսակները գերծ պահել ֆերմենտների և մանրէների ազդեցությունից, այդ ընթացքում հնարավորինս պահպանել ելանյութերի արժանիքները, միաժամանակ ստանալով նոր, ցանկալի որակի, իսկ, երբեմն, նաև ավելի մեծ սննդամթերքով մթերքներ:

Բուսական հումքատեսակների պահպանման ու պահածոյացման առավել տարածված եղանակները հետևյալներն են՝

- հովացում, որը ենթադրում է՝ հումքատեսակների պահպանումը դրանց կրիոսկոպիկ ջերմաստիճաններին մոտ ջեր-



մաստիճաններում,

- սառեցում, որը ենթադրում է՝ հումքատեսակների պահպանումը դրանց արդյունավետ ջերմաստիճաններին մոտ ջերմաստիճաններում,
- պահածոյացում՝ ջերմային մշակմամբ, որը ենթադրում է հումքատեսակների մշակումը պաստերիզացիայով
- աղադրում և թթվեցում, որը ենթադրում է հումքատեսակների պահպանումը կերակրի աղի և խմորման շնորհիվ առաջացած թթուների միջոցով,
- մարինացում, որը ենթադրում է հումքատեսակների պահպանում՝ կերակրի աղի, շաքարի և քացախաթթվի ներմուծման շնորհիվ,
- մրգերի և հատապտուղների եփում շաքարով, որը ենթադրում է հումքատեսակների պահպանում՝ բարձր օսմոտիկ ճնշում առաջացնելու շնորհիվ,
- պահածոյացման քիմիական եղանակներ, որը ենթադրում է հումքատեսակների պահպանում՝ մանրէների վրա թունավոր ազդեցություն գործող նյութերի օգտագործմամբ:

Վերը ներկայացված պահպանման ու պահածոյացման ցանկացած եղանակ ունի թե՛ իր արժանիքները, և թե՛ թերությունները, որոշ դեպքերում կիրառվում է նաև եղանակների համակցում:

Ժամանակակից կենցաղային սարքերը (ջրախաշիչներ, շոգեհարիչներ, աղացներ, հյութանջատիչներ, տրորող հարմարանքներ, սառնարաններ) հնարավորություն են ստեղծում տնային պայմաններում, հումքի աննշան բնափոխմամբ, պահպանել և դրանք պահածոյացնել: Այդ իմաստով, կարևորվում է ինչպես վերամշակելիս հումքի սննդամթերքի պահպանումը, այնպես էլ՝ ստացվող մթերքների անվտանգության ապահովումը, ինչը լիովին հնարավոր է ներկա կենցաղային պայմաններում:

Խնդրի լուծման լավագույն տարբերակ է ազգաբնակչությանը պահպանման ու պահածոյացման հիմքում ընկած գործընթացների, առաջարկվող բաղադրատոմսերի և ռեժիմների պահպանմամբ, պարզագույն տեխնոլոգիաների իրականացման վերաբերյալ տալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ուսուցանել:

Կարևորվում է նաև եղած կենցաղային սարքերի ճիշտ օգտագործման, պարզ հարմարանքների պատրաստման և կիրառման վերաբերյալ ուսուցումը, ինչպես և վտանգավոր սննդամթերքների տարբերակման ունակությունը:

ԾՐԱԳԻՐ Համայնքների զարգացում՝ Օքսֆամի ծրագրերի թիրախում

Արդեն մի քանի տարի է, ինչ միս ու արյուն ստացած կորպորատիվների զարգացման ծրագրերը տվել են իրենց արդյունքը: Սակայն շեշտն առավելապես դրվում է փոքր ֆերմերային փնտեսությունների զարգացման վրա: Ինչպես վստահեցնում է «Օքսֆամ»-ի կենսաապահովման ծրագրի ղեկավար Վադիմ Ուզունյանը, ֆերմերները բախվում են մարքեթինգային, մարտավարական և մի շարք այլ խնդիրների:



Գործնական կիրառում ստացած ծրագրերը տեսականորեն ներկայացվում են ոլորտի պատասխանատուներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին: «Կորպորատիվների շնորհիվ, ֆերմերները ստանում են նոր ծառայությունների և ֆինանսական ռեսուրսների մատչելիություն, քանի որ մենք համագործակցում ենք միկրովարկավորման կառույցների հետ, որոնք տրամադրում են մատչելի վարկեր: Առաջին տարին, որպես խթան, տրամադրվում են գրոյական տոկոսադրույքով վարկեր», - ասում է Վադիմ Ուզունյանը:

«Պարենային անվտանգության ռազմավարության մշակում և սնուցման խնդիր» թեման նույնպես ներկայացվել է կլոր սեղանի շուրջ հավաքվածներին: Պարենային անվտանգությունն իր մեջ ներառում է չոր սկզբունք: Առաջին պարենի ֆիզիկական առկայություն կամ՝ այլ կերպ ասած, տեղական արտադրություն, գումարած ներմուծում, հանած արտահանում:

Հետո արդեն պարենի մատչելիությունն է: Այստեղ արդեն գործ ունենք պարենի ֆիզիկական և ֆինանսական մատչելիության հետ: Երրորդ սկզբունքը՝ պարենի օգտագործումն է: «Պարենի առկայության կայունության տեսակետից, դիտարկում ենք այն դիկսերը, որոնք կարող են խոչընդոտել պարենի արտադրությանը կամ ներմուծմանը», - նշում է «Օքսֆամ»-ի պարենային անվտանգության ծրագրի պատասխանատու Ալեքսեյ Պետրոսյանը:

Խոցելի համայնքների փախստականներին և տեղացիներին՝ գյուղատնտեսական ապրանքներն իրացնելու հարցում «Օքսֆամը» ևս իր դերակատարումն ունի: «Մեր առաքելությունն է՝ նաև հարթել տարածայնություններն ու օգնել հաղթահարել դժվարությունները», - ասում է «Օքսֆամի» գյուղական համայնքների զարգացման և տարածաշրջանային ծրագրի ղեկավար Հրաչյա Զաքոյանը:

Գյուղական համայնքների զարգացման և տարածաշրջանային ծրագիրը շուրջ երեք ամիս է, իրականացվում է, հետևաբար խոսել արդյունքի կամ ակնկալիքների մասին պարուն Հ. Զաքոյանը դեռևս չի շտապում, ասում է՝ չի ուզում ժամանակից առաջ ընկնել:

ԸՆԳՈՐԻՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԻ

ԹԱՓՈՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՍԱՀՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Թվում է, թե վիսկիի արտադրության շահավետությունը բացահայտ է. արտադրողները այսօր թանկարժեք հեղուկ, ստացար այսօր եկամուտ: Իսկ ո՞վ է ասել, որ ցանկացած եկամուտ չի կարող ավելին լինել՝ հատկապես լավ մեներջման արդյունքում: Ներքոքերված թվերն այդ միտքը հաստատում են: Շուտանդամ արտադրող վիսկիի տարեկան շրջանառությունը հավասար է 4 միլիարդ ֆունտ ստերլինգի (ՖՍ): Որպես թափոն՝ առաջանում է մոտ 2 միլիարդ լիտր հեղուկ թափոն և 750 հազար տոննա դիրտ: Այդ հսկայական ծավալների վերամշակումը միանգամից 3 կարևոր խնդիր է լուծում. Էապես փոքրացվում է թափոնի ծավալը, այն դառնում է էկոլոգիապես ավելի անվտանգ, լրացուցիչ եկամուտ է առաջանում:

Այս սկզբունքով դեկավարվելով՝ Էդինբուրգի Նեյպիր համալսարանի Կենսավառելիքի հետազոտական կենտրոնին կից ստեղծված Նոր Celtic renewable Ltd ընկերությունը ձեռնամուխ եղավ խնդրի լուծմանը: Նախ՝ թարմացվեց դեռ մեկ դար առաջ հայտնի ացետոն-բուրանոլ-թթվանոլ շղթայական ֆերմենտացման տեխնոլոգիան, որի արդյունքում ստացված կենսաբուրանոլն արժեքավոր է նրանով, որ կարող է բենզոլը փոխարինել կամ օգտագործվել վերջինի հետ որպես խառնուրդ, ընդ որում, երկու դեպքում էլ շարժիչի որևէ մոդիֆիկացում չի պահանջվում: Ֆերմենտացիայի համար օգտագործվում են երկու հիշատակված թափոնները՝ ածխի մեխանիկական մշակումից հետո առաջացած հեղուկը և դիրտը՝ խառնված թորման մնացորդների հետ: Արդյունքում՝ երկիրը ձեռք բերեց արդյունաբերական Նոր միավոր՝ 100 միլիոն ֆՍ տարեկան շրջանառությամբ: Մոտակա 2 տարում ներդրվելու է 25 մլն ֆՍ, որի արդյունքում, այդ ժամկետի ավարտից սկսած, տարեկան կարտադրվի 1 միլիոն լիտր կենսավառելիք:

Այսպիսով՝ ևս մեկ անգամ ապացուցվում է, որ կենսավառելիքի հումքը երբեք պարտադիր չէ, որ դաշտում աճեցվի՝ մրցակից հանդիսանալով սննդամթերքի կամ անասնակերի արտադրությանը: Այն գետնին զցած ոսկի է, որ պետք է կռահել և վերցնել, այսինքն՝ կիրառել համապատասխան տեխնոլոգիաներ:

Տնտեսելով ապրելը՝ Եվրոպայի առաջատարի հաջողության հիմնական կոմանն է, իսկ Կլաուս Շվաբի պատվիրանների կատարումը ցանկացած երկրին առաջատար կդարձնի:

Աշխարհի առաջատարներից մեկը, իսկ Եվրոպայի անխոս առաջատար Գերմանիան այդպիսին է բազում ցուցանիշներով, այդ թվում՝ նաև արտաքին առևտրի տեսանկյունից, հանդիսանալով երկրորդ Չինաստանից հետո՝ 217 միլիարդ եվրո արտաքին առևտրի դրական սալոյով: Երբ Գերմանիային մեղադրում են արտահանման ագրեսիվ քաղաքականության մեջ, գերմանացիները համբերատար բացատրում են, որ իրենք պարզապես մրցունակ են, իսկ աշխարհը, որ շատ է հավանում գերմանական

արտադրության ապրանքներ, փոխարենը՝ քիչ բան կարող է առաջարկել նրանց, ահա որտեղից էլ առաջանում է շոշափելի պրոֆիցիտ:

Սպառման չափավորությունը որդեգրած գերմանացիները հասկանում են, թե որքանով է կարևոր արտադրանքի որակը. մի շարք երկրներ, որոնք, իրերի բերումով, գերարտադրում են ու չեն կարողանում իրացնել ավելցուկն այլ երկրներում, ստիպված են լինում այդժամ երկրի ներսում գերապառուց ապահովել, որն էլ բերում է սպառողական վարկերի ուռճացման, և որը, ինչպես գիտենք, չի բերում տնտեսության առողջացման: Այսինքն՝ երկիրը դրանով հասնում է հակառակ արդյունքի:

Տնտեսության վարման մեկ այլ ճիշտ կողմնորոշման քաղաքականություն դրսևորել է Մեծ Բրիտանիան XIX դարում: Արդյունաբերական հեղափոխության հետևանքով երկրի արտադրական ծավալներն աննախադեպ աճել էին, առաջացել էին հսկայական դրամական միջոցներ, որոնց պետք է ճիշտ ուղղություն տրվեր: Այդ ուղղությունը եղավ ԱՄՆ բարձր տեմպերով աճող տնտեսությունը, ուր դրանք ներդրվեցին՝ բերելով ներդրողներին մեծ եկամուտներ:

Առանձին պետությունների հզորությունների վերլուծությունը թույլ է տալիս ավելի լայն ընդանրացումներ անել և դրանք հասանելի դարձնել բոլորի համար, ինչը՝ վերջերս հաջողությամբ կատարել է Դավոսի համաշխարհային վեհաժողովի հիմնադիր և Նախագահ Կլաուս Շվաբը՝ մի քանի կանխատեսումների ձևով, որոնք էլ ներկայացվում են ստորև:

Գրագետ տնտեսական քաղաքականություն վարող երկրները դատապարտված են հաջողության, միայն թե պետք է պատրաստ լինել, որ տնտեսական զարգացումներն ավելի դանդաղ կարող են ընթանալ, որն էլ միուս կողմից կայունության նշան է հանդիսանում:

Որպես աճի գլխավոր շարժիչ ուժ՝ հանդիսանալու են նոր տեխնոլոգիաները, որոնց ազդեցությունը լինելու է ավելի խորը և մասշտաբային, քան՝ Նախորդ 2 դարերում: Սա կլինի թերևս միակ բացառությունը կետ 1-ից:

Մեծ տեմպերի սիրահարներին խորհուրդ է տրվում ավելի ուշադիր լինել բազմագործոն, փոխկապակցված դիսկուրսների նկատմամբ, որոնք գործում են միաժամանակ տնտեսական կառուցվածքների, կառավարության, անվտանգության ապահովող մեխանիզմների և մարդկանց առօրյայի վրա:

Որպեսզի որևէ բնագավառում ամեն բան չապակայունանա և շրջվի գլխավայր, բոլոր ստանդարտները պետք է վերանայվեն և թարմացվեն, իսկ մրցունակ լինելու համար և՛ բիզնեսին, և՛ իշխանություններին անընդհատ հարկ կլինի ադապտացվել, ընդ որում, վերջիններս պետք է իրենց ուշադրության կենտրոնում պահեն ոչ այնքան հետևողությունները,

որքան՝ կանխատեսումները:

Տնտեսական դաշտի բոլոր խաղացողները պետք է գիտակցեն, որ մեծ ու փոքր ձկների ժամանակներն անցել են, երբ առաջիններն օրինաչափորեն ուտում էին վերջիններին: Այժմ եկել է արագ և դանդաղ ձկների ժամանակը:

Տնտեսական աճ ապահովելու են ոչ թե կապիտալն ու բնական ռեսուրսները, այլ մարդկային երևակայությունն ու ստեղծագործական միտքը: Ռոբոտների հետագա տարածումից պետք չի վախենալ, որովհետև փոխվելու է նաև աշխատանքային շուկայի կառուցվածքը. անհրաժեշտ կլինեն ավելի մեծ թվով մարդիկ, որոնք կբարձրացնեն իրենց մասնագիտական որակը և, հետևաբար, ավելի լավ կվարձատրվեն:



Տերևը՝ որպես բազմապիսի կարևոր նյութեր արտադրող գործարան

Սովորական տերևը սովորական ֆոտոսինթեզի ժամանակ արևային էներգիայի միջոցով ֆոտոլիզի է ենթարկում ջրի մոլեկուլը՝ արտադրելով կյանքի շարունակման համար այդքան անհրաժեշտ թթվածին և ջրածին, որը վերականգնում է ածխաթթու գազը մինչև տարատեսակ շաքարներ: Կարելի է այնպես անել, որ այդ ջրածինը ոչ թե մասնակցի վերականգնման նշված ռեակցիաներին, այլ առանձնացվի և օգտագործվի որպես արժեքավոր վառելանյութ կամ՝ *Ralstonia eutropha* բակտերիաների ներկայությամբ և նույն արևային էներգիայի միջոցով, փոխակերպվի հեղուկ վառելիքի՝ իզոպրոպանոլի, որի օգտագործումը կենցաղում ավելի հարմար է: Սա վերջերս հաջողվել է Զարվարդի համալսարանի մի խումբ գիտնականների, որոնք այժմ էլ համակարգի 1% էներգաարդյունավետությունից անցում են կատարում 5%-ի, որը հնարավորություն կտա մեծամասշտաբ արդյունաբերական խնդիրներ լուծելու:

Մասնավորապես, այս եղանակով կարելի է ստանալ նույն իզոպրոպանոլն ավելի էժան և ավելի մաքուր վիճակում, որը բացի որպես վառելանյութ օգտագործելուց, մասնակցում է բազմաթիվ արժեքավոր միացությունների սինթեզին:

Վ Զ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԴՊՐԱԲԱԿՈՒՄ
ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է

Դպրաբակ համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակի վարչական տարածքում: Բնակիչները՝ Աղբեջանի Շամխորի շրջանից տեղահան եղած հայեր են: Դպրաբակը տարածքի ամենամեծ համայնքն է՝ ունի 270 ծուխ՝ 710 բնակիչ, որից՝ 80-ը միայնակ ծերեր են: Զամայնքում աշխատանքով ապահովված է մոտ 40 անձ, որոնք աշխատում են՝ գյուղապետարանում, դպրոցում, փոստում և անտառատնտեսության գրասենյակում, 10 քաղաքացի էլ պայմանագրային զինծառայողներ են:

Բնակչության մեծ մասը զբաղվում է անասնապահությամբ: Չնայած ծանր պայմաններին, գյուղի բնակչության քիչ մասն է գնում արտագնա աշխատանքի: Գյուղապետ Զովհաննես Նազուխանյանի



տեղեկացմամբ, տարածքում կան սողանքներ և գյուղի մի ամբողջ թաղամասի տներ գտնվում են վթարային վիճակում:

Գյուղի շրջակայքը հարուստ է անտառներով և բնական մարգագետիններով: Զամայնքն ունի խմելու

ջրի ջրագծի կառուցման կարիք: Զիմնախնդիրներից մեկն էլ՝ հեռագնա արոտներն են, որոնք ունեն մեծ չափեր, և բացակայում է ջրարբիացման համակարգը:

Զամայնքային պատկանելության հողատարածքները կազմում են 191 հա (երկրորդ կարգի վարելահող), 487 հա խոտհարք (չորրորդ կարգի հողեր), 1542 հա արոտավայր և տնամերձեր՝ 90 հա մակերեսով: «Տնամերձում մշակում են պտղատու ծառեր, կարտոֆիլ, գազար, կաղամբ, լոբի, ճակնդեղ և այլն», - ասում է գյուղապետը:

Վերջին տարիներին համայնքում նկատվում է առաջընթաց անասնապահության բնագավառում. մի քանի տնտեսություններ ունեն անասնազվաքանակի ավելացում, իսկամում են 10 և ավելի կով: Սակայն համայնքում չկա կաթի վերամշակման արտադրամաս:

Չարգանում է նաև մեղվաբուծությունը (400 մեղվաընտանիք): Ինչպես նշում է պրն. Նազուխանյանը, առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ագրոտորիզմի զարգացման համար:

Նելլի Սահակյան

ՀԱՍՍԱՅՆԱԿԱՆ

ԲԵՐՔԱՀԱՎԱԲԸ ՄԿՍՎԵԼ Է

«Արմավիրի մարզեր Աշուր Ղահրամանյանն այցելել է Արարիմեր և Առաքաշեն համայնքներ՝ ծանոթանալու բերքահավաքի ընթացքին: Արարիմեր համայնքը Վաղարշապատի փարածաշրջանում հայտնի է կարտոֆիլի մշակությամբ: Մարզպետը տեղեկացել է, որ համայնքում 358,6 հեկտար վարելահողից 196 հեկտարն այս փարի զբաղեցնում է ձմերուկի ցանքատարածքը: Քիչ էն եղել նաև հացահատիկի ցանքատարածքները, որոնք փոխարինվել են ձմերուկով, որի մշակությունը բավականին եկամտաբեր է գյուղացու համար՝ անգամ մեկ կիլոգրամը 60 դրամով մեծածախ վաճառքի դեպքում: Աշնանացան ցորենի ցանքն այս փարի համայնքում կազմել է 71 հեկտար: Նախորդ փարի Արարիմերում 1 հեկտարից ստացվել էր 4-5 տոննա ցորեն, որը վաճառվել է՝ մեկ կիլոգրամը 130 դրամով:



Հարակից Առատաշեն համայնքում մարզպետն այցելեց բանջար-բոստանային մշակաբույսերի մշակությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններ: Համայնքում հիմնականում աճեցվում է լոլիկ, պղպեղ, սոխ, ծաղկակաղամբ և ձմերուկ: Գյուղացիներն ուրախությամբ փաստել են, որ գոհ են ստացված բերքից, չունեն իրացման և ոռոգման հետ կապված խնդիրներ:

Առատաշեն համայնքի ղեկավարը մարզպետին ներկայացրել է, որ համայնքում կան հողամասեր, որտեղ ցանքատարածքները ջրելուց հետո ջրահեռացման ցանց չկա, ինչը բացասաբար է ազդում բույսի աճի վրա: Տարիներ առաջ սավառակատարն այդ տարածքում գործել է, հողերի մասնավորեցումից հետո, այն փակվել է և, ոռոգման առումով, դարձել խնդրահարույց: Մարզպետը, ծանոթանալով խնդրին, խոստացել է լուծում տալ դրան և գյուղացուն ազատել ընթացիկ հոգսերից:

«Մարզի գյուղացիական տնտեսությունները լավ բերք են ստացել: Գյուղատնտեսական տարին մեր գյուղացու համար բերքառատ է եղել և բանջար-բոստանային մշակաբույսերի, և պտղի մշակության առումով», - նշել է մարզպետը՝ այդ հարցում կարևորելով նաև գյուղացուն ցուցաբերվող կառավարության աջակցությունը: Աշուր Ղահրամանյանը վստահեցրել է, որ ոռոգման այս շրջանում ջրի խնդիր չկա մարզում, լինելու դեպքում էլ՝ ըստ նրա, ԶՕԸ-երի հետ համատեղ աշխատանքներ են իրականացվում, և հարցին արագ լուծում է տրվում:

Անդրադառնալով արդեն սկսվող լոլիկի բերքահավաքին՝ մարզպետը նշել է, որ մթերոլ խոշոր կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածությունները թույլ են տալիս ասել, որ գյուղացին լոլիկի իրացման խնդիր ևս չի ունենա, և մեկ կիլոգրամը կմթերվի 40 դրամով:

ԱՌԱՏ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔ

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանի, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դավիթ Սանուչարյանի ուղեկցությամբ, աշխատանքային այցով եղավ Սպիտակի տարածաշրջանի Գեղասար, Կաթնաջուր և Մեծ Պարնի համայնքներում: Այցի նպատակը՝ ցորենի և գարու բերքահավաքի, խոտհնձի աշխատանքների ընթացքին տեղում ծանոթանալն էր: Գեղասար համայնքի վարելահողերը կազմում են 240,13 հա, Կաթնաջուր համայնքինը՝ 677,59, և Մեծ Պարնիինը՝ 1556,57 հա: Գեղասարում կատարվել է 50-ական հա ցորենի և գարու, Կաթնաջուրում՝ 300 հա ցորենի և 150 հա գարու, Մեծ Պարնիում՝ 655 հա ցորենի և 190 հա գարու ցանք: Համայնքներում ոռոգման խնդիր չկա:

Գյուղաբնակներին մտահոգում է հակակարկտային կայանների սակավությունը: Կայանները կարկտից ամբողջությամբ չեն ապահովագրում ցանքատարածությունները: Ինչպես ականատես եղան համայնքներ այցելած պաշտոնյաները, տարածաշրջանում գարու և ցորենի աննախադեպ բերք է սպասվում: Համայնքների ղեկավարները նշել են, որ նախորդ տարվանից առնվազն երկու անգամ ավելի բերք են ակնկալում:

Խոտը ևս առատ է: Նրանք տեղեկացրել են, որ համայնքների բնակիչներն օգտվել են պետական աջակցությամբ մարզի գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով տրված՝ դիզվառելիքից, ցորենի, գարու սերմացուից, ազոտական պարարտանյութից:

Մարզի ղեկավարը վստահեցրել է, որ պետական աջակցությունը կշարունակվի նաև հետագայում: Ինչ վերաբերում է հակակարկտային կայաններին, ապա մարզպետը խոստացել է, առաջին իսկ հնարավորության դեպքում, աջակցել նոր հակակարկտային կայաններ տեղադրելու հարցում:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից այս տարվա «Գյուղմթերք արտադրող կին հերոս» մրցանակաբաշխությանը Գեղարքունիքի մարզից ներկայացվել էր Աղավնիկ Դանիելյանի թեկնածությունը, ում էլ շնորհվեց արժանի ու սպասված պարգևը: Այդ կոչումը համեստ փոխհատուցումն ու երախտիքն էր այն նվիրումի, որ ցուցաբերում է տիկին Աղավնիկը, առաջինի դուստրը, հայ կնոջ շնորհներով օժտված մայրը:



Գեղարքունիքի մարզի Գետիկ գյուղում գործող ամենախոշոր ֆերմերային տնտեսությունը հիմնադրվել է Շաքար և Աղավնիկ Դանիելյան ամուսինների ջանքերի շնորհիվ: Նրանք գործունեության քսաներեք տարիների ընթացքում, քայլ առ քայլ, հետևողականորեն զարգացրել են իրենց տնտեսությունը՝ ավելացրել արտադրության ծավալներն ու աշխատատեղերը, բարելավել աշխատանքային պայմանները: Ֆերմերային այս տնտեսությունն աշխատասիրության լավագույն օրինակ է շրջապատի համար:

«Սկսել ենք 10 գլուխ կովից. սեփականաշնորհման ժամանակ մեզ այդքանը բաժին հասավ: Մենք, ի տարբերություն շատերի, որոնք անմիջապես հարկադիր մորթի ենթարկեցին իրենց հասանելի կովերը, տարեցտարի ավելացրինք անասնազխաքանակը՝ քսաներեք տարում հասցնելով 220-ի», - պատմում է տիկին Աղավնիկը: Ծնված էզ հորթերը պահպանել են, արունները՝ մեծացրել ու վաճառել: Բուծել են նաև ոչխարներ, խոզեր, թռչուններ, զբաղվել են մեղվաբուծությամբ: Աղավնիկն առանձնակի սեր ունի աշխատանքի նկատմամբ:

«Անհնար է, որ մարդը զբաղվի անասնապահությամբ, գյուղատնտեսական այլ աշխատանքներով և ապրուստի բավարար պայմաններ չստեղծի ու կայուն եկամուտ չունենա: Իսկ եթե մտածի իր տնտեսությունը զարգացնելու մասին, նա անպայման կհասնի բարեկեցության այն մակարդակին, ինչին մեր ընտանիքը հասել է այսօր», - հավելում է Աղավնիկը:

Դանիելյանների տնտեսությունում այսօր բուծվում է 220 գլուխ խոշոր, 100 գլուխ մանր եղջերավոր անասուն, 20 գլուխ խոզ, 50 թռչուն, 40 մեղվաընտանիք: Տարեկան այստեղ արտադրվում

է մինչև 180 տոննա կաթ, 60 տոննա միս, 500 կիլոգրամ մեղր: Բնապահպանորեն մաքուր սննդամթերքն իրացվում է տեղում, իսկ ստացված գումարն ուղղվում է տնտեսության բարեկեցությանը, վերարտադրությանն ու հետագա զարգացմանը: Անասնակերի կուտակման ժամանակ աշխատատեղերի քանակը հասնում է 50-ի:

«Հեշտ չի եղել տնտեսության կայացումն առանց քրտնաջան աշխատանքի, ոչինչ հեշտությամբ չի տրվում, - շարունակում է մեր հերոսուհին, - ութ տարի շարունակ, երբ դեռ աշխատողներին վճարելու հնարավորություն չունեինք, կով եմ կթել, գոմ մաքրել, անասուններին կերակրել, արածեցրել, խոտ հնձել ու հավաքել, կատարել ամենաձանր ֆիզիկական աշխատանքները, մինչև որ կայացել ենք ու բռնել զարգացման ուղին: Կիթը կատարվում է մեքենայացված, անասնապահների համար ստեղծված են հանգստի լավագույն պայմանները:

Տնտեսությունն ապահովված է նաև գյուղգործիքներով և անհրաժեշտ տեխնիկայով: Արտադրանքի իրացման խնդիրներով՝ Դանիելյան ամուսիններին օգնում են իրենց զավակները: «Մեր չորս կթվորուհիներին տրամադրել ենք լվացքի մեքենաներ, որպեսզի իրենց ընտանիքներում հոգսերը թեթևանան, - ասում է տիկին Աղավնիկը, - իսկ մեկ անասնապահի համար գնել ենք բնակարան»:

Աղավնիկ Դանիելյանը ծնվել է Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղում: Նա առանձնակի ակնածանքով է խոսում Գետիկի և Ճամբարակի տարածաշրջանի բնակիչների հյուրասիրության, մարդկային այլ շնորհների ու արժանիքների մասին: «Ամուսնուս ընտանիքը բազմանդամ էր, ուր մեծանում էին յոթ երեխա: Ես ոչ միայն սիրեցի այդ ընտանիքը, այլ

նաև տարածքի բնակիչներին, ովքեր շիտակ են, իրար հանդեպ հարգանք ու նվիրվածություն տածող», - հիշում է նա:

Դժվարին և հետաքրքիր ճանապարհ է անցել տիկին Աղավնիկը: Նա 1975 թվականից աշխատանքի է անցել Գետիկի խորհրտնտեսությունում՝ կատարելով տարբեր աշխատանքներ: Վերջինիս լուծարումից հետո, մինչ այժմ նա անփոփոփոխ աշխատում է Գետիկի գյուղացետարանում՝ որպես հաշվապահ: «Իմ ծննդավայրում շատ արդյունավետ էր հողագործությունը, Գետիկում՝ անասնապահությունը, - ավելացնում է ֆերմերը, - այստեղ կարելի է զարգացնել անասնապահությունը, արտադրել բարձրորակ գյուղմթերքներ, կյանքը դարձնել բարեկեցիկ: Մենք կավելացնենք ու կզարգացնենք մեր տնտեսությունն այլևս, ինչքան որ կբավարարեն մեր ուժերն ու հնարավորությունները: Բնությունը մեզ, կյանքի հետ մեկտեղ, շռայլ բարիքներ է տվել, որը մենք հազարապատկում ենք քրտնաջան աշխատանքի շնորհիվ, ապրում՝ թե Աստուծոց, և թե մեզանից գոհ ու երջանիկ, որ կարողանում ենք այսքան ներդաշնակորեն գործել:

Աղավնիկ Դանիելյանը կարևորում է կնոջ դերն ընտանիքի կայունության ու ամրապնդման գործում: Կուզենար, որ հայ կանայք ավելի շատ ընդգրկվեին գործարարության ոլորտում: Նրա կարծիքով, կանայք կարող են կայացնել խելամիտ որոշումներ և իրագործել դրանք: Յուրաքանչյուր հետևողական աշխատանք տալիս է իր պտուղները: Նա դրանում համոզվել է իր օրինակով, և կուզենար, որ այդ համոզմունքն ունենային գյուղատնտեսության ծանր ու դժվարին ոլորտում ընդգրկված բոլոր կանայք:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՍՊԻՏԱԿԱԹԵՎԻԿ

Թիրախային կամ «տեր» բույսեր՝ ավելի քան 300 դեկորատիվ, վայրի բույսեր, բանջարաբուսականային և ցիպրուսային մշակաբույսեր:

Ջերմատնային սպիտակաթևիկի (Trialeurodes vaporariorum Westw.) հայրենիքը Ամերիկան է:

Աշխարհագրական տարածվածությունը: Տարածված է ամենուրեք:

Վնասակարությունը

Սպիտակաթևիկի հասուն միջատները և թրթուրները սևվում են տերևների բջջահյուսվածքում: Սևման հետևանքով տերևները դեղնում են, առաջանում է բծավորություն, բացի դրանից, սևվող անհատներն արտազատում են շաքարային կույրեր, որոնք թափվելով ներքին յարուսի տերևների և պտուղների վրա, նպաստում են մի շարք սևկերի բազմացմանը: Ուժեղ վարակի դեպքում տերևները սևանում են, բույսի աճը դանդաղում է, տեղի է ունենում տերևաթափ, արդյունքում՝ բերքը նվազում է: Հայաստանի պայմաններում ջերմատնային սպիտակաթևիկը չի կարող ձմեռել բաց գրունտում և ձմեռման համար նպաստավոր է միայն փակ գրունտը:



Սպիտակաթևիկի թափառողները՝ նիմֆաները հարսնյակը ձվերը, հասուն վնասատուն

Վնասարանական առանձնահատկությունները

Սպիտակաթևիկը բազմանում է ամբողջ տարվա ընթացքում՝ միգրացիա կատարելով փակ գրունտից բաց գրունտ և հակառակը: Սպիտակաթևիկը ձվադրում է «տեր» բույսերի տերևների հակառակ երեսին՝ դնելով 60-500 ձու: 7-12 օր հետո ձվից դուրս են գալիս թափառողները՝ նիմֆաները, որոնք վնասատուի միակ շարժուն ձևերն են: Վնասատուի մնացած բոլոր ոչ հասուն փուլերն անշարժ են: Չարգանալով՝ անցնում է երկու թրթուրի փուլ, որից հետո նրան ծածկող արտաքին շերտը հաստանում է, կոշտանում՝ տալով լրացուցիչ ամրություն, որի տակ էլ կատարվում է հարսնյակավորումը: 10-14 օր անց դուրս են գալիս հասունները: Մեկ սերնդի տևողությունը՝ 25-40 օր է:



Սպիտակաթևիկի թիթեռները տերևի հակառակ երեսին



որսիչ թակարդները

Արդարին նշանները

Սպիտակաթևիկի հասունները 1-2 մմ միջատներ են՝ դեղնավուն մարմնով, երկու գույզ թևերով, որոնք ծածկված են սպիտակ ալրանման փոշով: Հանգստի վիճակում թևերը դարձված են տափակ տանիքի նման:

Ձվերը բույսին կպած են կոթունի օգնությամբ, սկզբում դրանք բաց գույնի են և ուղղահայաց դիրքով, հասունանալուն զուգընթաց՝ մզանում են:

Թրթուրները հարթ են, օվալ, որոնք նման են վահանի: Մեկ վեգետացիայի ընթացքում (ամառ-աշուն) կարող է տալ 10-12 սերունդ:

Պայքարի միջոցառումներ

Կիրառել ցանքաշրջանառություն: Դաշտից հեռացնել և ոչնչացնել բույսերի վարակված մասերը: Օգտագործել դեղին գույնի կաշուն թակարդներ՝ վնասատուի քանակը կանոնավորելու հասուն միջատների մշտադիտարկման և պայքարի միջոցառումների կազմակերպման համար:

Քիմիական միջոցներից սպիտակաթևիկի դեմ կարելի է օգտագործել «Ակտարա» (20-40գ/100լ, ա.ն. տիամետոքսամ), «Ադմիրալ» (0,05%, ա.ն. պիրիպրոքսիֆեն), «Սուլֆ-Ալֆա» ԽԵ (0,5 լ/հա, ա.ն. Էսֆենվալերատ), «Վերտիմեկ» (Աբամեկտին 18 գ/լ), «Կոնֆիդոր 200» ՋԼԽ (0,5-0,75 լ/հա, ա.ն. իմիդակլոպրիդ, «Կոնֆիդոր» ՅԴ (0,75 լ/հա, ա.ն. իմիդակլոպրիդ), «Մոսպիլան» ՋՀ (0,25 կգ/հա, ա.ն. ագետամիպրիդ), «Ցիպերիլ» (0,4 լ/հա, ա.ն. ցիպերմետրին):

«ՀԱԲԸԿ»

Բուսասանիտարական հետազոտությունների լաբորատորիա

ՀԱՍՍԱՅՆԸՎՅԻՆ

ՇՈՒՐՋՈՐՅԱ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի աջակցությամբ և Լուկաշինի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ, համայնքում իրականացվել է ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագիր:

«Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Քերեն Հիլարդը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Խաչատրյանը, Լուկաշին համայնքի ղեկավարը, մեծ թվով հյուրեր և լուկաշինցիներ ներկա են գտնվել ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրին նվիրված համայնքային միջոցառման հանդիսավոր արարողությանը:

Նախքան ծրագրի իրականացումը, համայնքում մշտապես խմելու ջրի խնդիր է եղել, իսկ որոշ հատվածներում ջրամատակարարում ընդհանրապես չի իրականացվել: Տարիների ընթացքում ջրամատակարարման ցանցն աստիճանաբար քայքայվել է:

Այժմ ջրամատակարարման խնդիրը լուծվել է նոր, առավել դիմացկուն և հոսքակորուստ չունեցող խողովակների տեղադրմամբ, համակարգի բարելավման ծրագրի իրականացմամբ: Համայնքն ընդգրկվել է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում: Լուկաշինում ջրամատակարարումն ապահովող հին, ոչ արդյունավետ պոմպերն այլևս չեն օգտագործվում, և խմելու ջուրը մատակարարվում է Արմավիրի ջրամբարից՝ ինքնահոս եղանակով: Բնակիչները, համակարգի բարելավման արդյունքում, նախկինում օրական 2 ժամի փոխարեն, ներկայումս ունեն շուրջօրյա կայուն ջրամատակարարում:

Շնորհակալություն հայտնելով ծրագրի պատասխանատուներին, միևնույն ժամանակ կարևորելով Լուկաշին համայնքի ղեկավարի գործունե աջակցությունը ծրագրի իրականացմանը՝ մարզպետը որախությամբ փաստել է, որ արդեն համայնքում 532 ընտանիքներ արդեն

ապահովված են շուրջօրյա ջրամատակարարմամբ: «Արմավիրի մարզը տարիներ շարունակ խմելաջրի հետ կապված լուրջ խնդիր է ունեցել և այժմ փորձում ենք աստիճանաբար լուծում տալ այդ խնդրին: Արդեն նախնական պայմանավորվածություն ունենք «Հայքոմուղկոյուդի» ՓԲԸ-ի տնօրինության հետ կապված Արագածից 20 կմ երկարությամբ ջրագծի Արմավիր քաղաք հասցնելու հետ, որով քաղաքի, նաև հարակից համայնքների բնակիչներին կկարողանանք ապահովել որակյալ ջրով», - նշել է մարզպետը:

«ԱՄՆ-ի կառավարությունը լայնամասշտաբ տեխնիկական աջակցություն է տրամադրում Հայաստանի գյուղական համայնքներին, հատ-



կապես՝ դրանցից առավել կարիքավորներին: Մաքուր ջրամատակարարումը խիստ կարևոր է առողջության և հիգիենայի համար: ԱՄՆ ՄԶԳ-ն օգնում է համայնքներին՝ վերականգնելու ջրամատակարարման մաշված ցանցերը՝ բնակչությանն ապահովելով հուսալի ջրամատակարարմամբ, միևնույն ժամանակ խնայելով ջուրն ու էներգիան», - նշեց ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Քերեն Հիլարդը:

«Դժվար թե որևէ մեկին զարմացնի այն, որ ջուրն ամենակենսական անհրաժեշտությունն է: Սակայն ավելի քան զարմանալի է այն կորուստն ու համբերությունը, որը դրսևորել են Լուկաշինի բնակիչները: Մարդիկ տասնամյակներ շարունակ ապրել են իրենց հողի վրա՝ դիմանալով խմելու ջրի աղքատ հանդիսացող ստորգետնյա հորից ջուր հայթայթելու ամենօրյա տանջալից աշխատանքին», - ընդգծել է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը՝ նշելով, որ ընկերությունը պարզապես չէր կարող անտարբեր մնալ այդ հարցում:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ՝ ՆՈՐ ԶՐԱԿԻԾ

Վերջերս Լոռու մարզի Չկալով համայնքում օրը տոնական էր. այստեղ նոր ջրագծի կառուցմամբ, վերջնականապես լուծվեց խմելու ջրի հարցը: Զրագծի կառուցումը Չկալովում սկսվել էր դեռևս 2014 թ. սեպտեմբերից, կառուցվել է մոտ 22 կմ երկարությամբ ջրագիծ: Ծրագրի ընդհանուր արժեքը 39 մլն դրամ է, որից՝ 23 մլն-ը հատկացրել է «ՎիվաՍել» ընկերությունը, 13 մլն-ը՝ ծնունդով չկալովցի, բարերար Սիլվա Մովսիսյանը և 3 մլն-ը՝ պետական աջակցությամբ և 5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում իրականացվող, որը հատկացրել է Լոռու մարզպետարանը:

Զրագծի հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին՝ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, պաշտոնատար անձինք, «ՎիվաՍել» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Օրինության կարգից հետո, ներկաներին ուղղված իր ողջույնի խոսքում՝ Լոռու մարզպետը կարևորել է ծրագրի իրականացումը՝ համայնքին ցուցաբերված աջակցության համար իր երախտագիտությունը հայտնելով բարերարներին:

Լոռու ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՀՐԱՇՔ «ԳՆԴԱԿԸ»

Ձմերուկը (լատ.՝ Citrullus) դոմագ-գինների դասի միանյա կամ բազմանյա բույս է: Ձմերուկի հայրենիքը Հարավային Աֆրիկան է: Հնում ձմերուկն այս-բան մեծ չի եղել: Եգիպտոսում մինչև օրս էլ պահպանվում է ձմերուկի մի տեսակ, որը խնձորի չափ է, և մարդիկ օգտագործում են միայն դրա սերմերը:

Ներկայիս խոշոր ձմերուկի տեսակներն արարներն ու հրեաները անվանել էին «բատիխ»: Ռուսաստան մուտք է գործել 13-14-րդ դարերում, մոնղոլական արշավանքների ժամանակ. անվանվել է «արբուզ», որ թուրքական «կարբուզ» բառից է ծագել, որը այն թարգմանաբար նշանակում է «շի վարունգ»:

Հայաստանում ձմերուկը հայտնի է եղել շատ վաղուց: Ձմերուկը սննդարար

150 գրամ ձմերուկի ընդունումը կարող է բավարարել օրգանիզմի մագնիումի պահանջը: Հատկապես սիրտ-անոթային հիվանդությամբ տառապողների համար այն արդյունավետ դեղամիջոց է:

Միևնույն ժամանակ ձմերուկը հակացուցված է որոշակի հիվանդությունների ու առողջական խնդիրների դեպքում: Այն խորհուրդ չի տրվում դիաբետիկներին, երիկամներում քար ունեցողներին, պիելոնեֆրիտի, ենթաստամոքսային գեղձի բորբոքման, ինչպես նաև շագանակագեղձի հետ կապված խնդիրներ ունեցողներին: Խորհուրդ է տրվում շատ ձմերուկ ուտել հատկապես հակաբիոտիկների կուրս անցած մարդկանց, քանի որ այն չեզոքացնում է դեղորայքի կողմնակի ազդեցությունը:



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ԶՄԵՐՈՒԿԻ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 3-ը ձմերուկի համաշխարհային օրն է:

Ձմերուկի 90 %-ից ավելին ջուր է:

Սովորական և վայրի ձմերուկների խաչասերումից ստացվել է դեղին գույնի հիբրիդ, որը վաճառքում կա:

Վիետնամում ձմերուկը Նոր Տարվա սեղանի անբաժանելի մասնիկն է և տոնի խորհրդանիշը:

է և ունի դուրեկան համ:

Ձմերուկների աճեցման համաշխարհային լիդերն է, բնականաբար, Չինաստանը:


Տերևները հերթադիր են, բլթակավոր, խորը կտրտված: Ծաղիկները մեկական են, հազվադեպ՝ փնջերով, բաժանասեռ, դեղնավուն:

Ձմերուկը հարուստ է C և B վիտամիններով, ֆոլիաթթվով, շաքարով (հատկապես՝ ֆրուկտոզ) և այլն: Այն ունի բարձր երաշտադիմացկունություն: Մինչ ծաղկելը, պետք է ջրել քիչ, միայն հով ժամերին: Վեգետացիայի ժամանակ ձմերուկին վսասում են հողաբնակ վսասատուները, այրացողը, լվիճները: Կապված սորտից՝ ձմերուկը սկսում է հասունանալ հուլիս-օգոստոս ամիսներին: Տարածված սորտերից են՝ Արևիկը, Հասմիկը, Մեխտոպոլսկի 142-ը, Մարգարիտը և այլն: Բերքը հավաքում են, պարբերաբար, վաղ առավոտյան կամ երեկոյան:

Ձմերուկը հրաշալի միջոց է երիկամների, լեղապարկի համար (հատկապես՝ քարերի դեպքում, այն կանխարգելիչ միջոց է): Այս միջոցը խորհուրդ է տրվում նաև արթրիտի, նեֆրիտի, աթերոսկլերոզի, փորկապության դեպքում: Ձմերուկը մեծ քանակությամբ երկաթ է պարունակում, որի շնորհիվ այն պարզապես անհրաժեշտություն է անեմիայով տառապողների համար: Շատ օգտակար է շաքարախտով հիվանդների համար: Ձմերուկը օրգանիզմից հեռացնում է խլեստերինը: Օրվա ընթացքում, նույնիսկ,

Հին Եգիպտոսում, փարավոններին թաղելիս, նրանց հետ էին դնում նաև ձմերուկներ, որպեսզի նրանք, անորշիրմյան աշխարհի հասնելու ճանապարհին, կարողանան իրենց քաղցը հագեցնել:

Կալիֆորնիայում կարելի է հանդի-



պել այնպիսի մի երևույթի, որը կոչվում է «ձմերուկի ձյուն»: Անձրևը ունի ձմերուկին շատ նման համ և հոտ: Գիտնականները ձյան մեջ հայտնաբերել են գերփոքր ջրիմուռներ, որոնք այսպիսի ձյան «մեղավորներն են»:

Հասկանալու համար արդյոք ձմերուկն աճեցված է նիտրատների օգնությամբ, թե ոչ, մի փոքրիկ կտոր գցեք սովորական ջրով բաժակի մեջ, եթե ջուրը ուղղակի պղտորվում է, վստահ կերեք, իսկ եթե կարմրում կամ վարդագունում է, ապա ցավոք ձեր կասկածները տեղին էին, դուք ուտում եք նիտրատներ, ոչ թե վիտամիններ: Ընտրելիս նայեք, որ փայլուն լինի, իսկ պոչիկը՝ չորացած:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ԱՄԵՆ ԻՆՉ ԴԱՂՁԻ ԵՎ ԿՈՐԵԿԻ ՄԱՍԻՆ

Դաղձի յուղի հիմնական բաղադրամասը ստացվում է դրա մեջ պարունակվող մեկուկից: Մեկուկը, մաշկի և լորձաթաղանթի հետ շփվելիս, հրահրում է սառնության զգացողություն, դրա հետ մեկտեղ, նեղանում են արտաքին արյունատար անոթները և լայնանում ներքին օրգանների անոթները:



Դաղձի յուղն օժտված է հզոր հակաանթիք հատկությամբ և թեթև թմրեցնող արդյունքով:

Բժշկության մեջ դաղձն օգտագործվում է լեղապարկի և յարդի հիվանդությունների ժամանակ: Դրանից պատրաստված թուրմերը, եփուկներն ու պատրաստուկներն օգնում են որոշ լեղաքարային հիվանդությունների դեպքում, ուժեղացնում աղիների աշխատանքը, մաքրում օրգանիզմը խարամներից, բացի այդ, այն նշանակվում է կոլիտների և Էնթերոկոլիտների դեպքում:

Ավիցեննան ջրային անանուխ է առաջարկել ներքին արյունահոսության, գլխացավի, աղետամոքսային հիվանդությունների, վիճալի անանուխ՝ արյունատար անոթների լայնացման, ախորժակի բարելավման, աղիների գործունեության կանոնավորման համար: Ժողովրդական բժշկությունը խորհուրդ է տալիս անանուխ օգտագործել կենտրոնական նյարդային համակարգի, սրտային հիվանդությունների, մանկական գեղձախտի (ռախիտի) բուժման համար: Անանուխի թեյը բարելավում է մարսողությունը, կանխում սրտխառնոցը, նպաստում լեղարտադրմանը: Այն կենսաբար ըմպելիք է:

Սովորական կորեկը (Panicum miliaceum) հացազգիների ընտանիքի պատկանող միամյա խոտաբույս է: Ցողունի բարձրությունը՝ 0,4-1,5 մ է, ցողուններն աճում են փնջերով՝ կազմելով արտահայտված թփիկներ: Մազարմատները կարող են խորանալ հողի մեջ՝ մինչև 1,5 մ կամ տարածվել՝ 1,2 մ տրամագծով:

Հատիկների գույնը կարող է լինել սպիտակավուն, դեղին, կարմրավուն, շագանակագույն: Բույսը ջերմասեր է, երաշտադիմացկուն, հեշտ հարմարվում է աղակալած հողերի վրա: Թթվային հողերի վրա չի աճում: Բույսերի աճի շրջանը կարճատև է՝ 65-80 օր, ինչի շնորհիվ էլ մշակվում է հատկապես այն շրջան-

ներում, որտեղ ամառը կարճ է:

Կորեկը պարունակում է 2-4 % ճարպ, 10-14 % տոկոս սպիտակուց, 55-80 % օսլա, մոտ 8 % բջջանք:

Կորեկից ավելի շատ ճարպ է պարունակում միայն վարսակը, իսկ սպիտակուցներ՝ հնդկացորենը: Կորեկը պարունակում է մարդու օրգանիզմում չսինթեզվող ամինաթթուներ՝ տրեոնին, վալին, լեյցին, լիզին, հիստիդին, և այլն: Կորեկը հարուստ է ֆոսֆորով (այն 1,5 անգամ ավելի է, քան՝ տավարի մսում), մագնիում, կալիում (մի քանի անգամ շատ, քան՝ բրնձում), պղինձ, ցինկ, բրոմ, նիկել և այլն):

Ենթավիտամին A-ի և B խմբի վիտամինների՝ հատկապես նիացինի և ֆոլիաթթվի պարունակությամբ կորեկը գերազանցում է այլ ճավարտեղեններին: Դաշտպանիչ թաղանթը հեռացնելուց հետո հատիկի սաղմը և հետևաբար՝ օգտակար նյութերը պահպանվում են: Կորեկի պահպանման ժամկետը 8-12 ամիս է, պահպանման ժամանակ մակերեսի վրա առաջանում է ճարպի օքսիդի շերտ, հատիկը դառնում է դառնահամ և ոչ պիտանի:

Կորեկաձավարի շիլան կարգավորում է արյան շրջանառությունը, սրտանոթային համակարգի և յարդի աշխատանքը, նյութափոխանակությունը, ամրացնում է ոսկորները, ատամները, եղունգները, օգնում է հաղթահարել հոգնածությունը, ընկճախտը և անբուժելիքը, նպաստում է ճարպեղի այրմանը, թույլների, աղային ստվածքների տրոհմանը և օրգանիզմից հեռացմանը: Կորեկաձավարում պարունակվող ճարպը լիովին յուրացվում է օրգանիզմում, չի պարունակում խոլեստերին, նպաստում է կարոտինի և D վիտամինի յուրացմանը:

Շիլան խորհուրդ է տրվում շաքարային դիաբետի, ալերգիայի, ենթաստամոքսային գեղձի հիվանդությունների, ընդհանուր թուլության դեպքում: Ըչերին է հայտնի, որ կորեկով կարելի է բուժել հիպերտոնիան, հավկուրությունը:

Կարևոր է իմանալ, որ կորեկաձավարից պատրաստված շիլան նպաստում է հակաբիոտիկ դեղերի տրոհման հետևանքով առաջացած նյութերի հեռացմանը:

Ըստ սննդի մեջ օգտագործվող ձավարեղենի դասակարգման՝ կորեկը համարվում է նվազ կարևոր, քան՝ ցորենը, տարեկանը, բրինձը, հնդկացորենը, վարսակը, գարին:



ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱԳՐՈ Լրատու

2015 թ. ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

1 տարվա գինը՝ 3960 դրամ	1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսականը՝ 1980 դրամ	6 ամսականը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 120 դրամ	1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արտաշ» կազմակերպությունները